ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 8 հունիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով Կարապետ Հաջիյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Կարապետ Հաջիյանը 21.05.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլուխը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացրել է հետեւյալ հիմնավորումները.

դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխի եւ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների միջեւ հակասությունը դրսեւորվում է նրանում, որ վերը նշված գլխում անձին հնարավորություն չի ընձեռվում բողոքարկել գործի վարույթը վերսկսելու մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտը, որի հետեւանքով խախտվում է անձի իրավունքների վերականգնման հնարավորությունը:

Դիմողը գտնում է, որ «եթե հնարավոր է բողոքարկել գործի վարույթը կասեցնելու մասին դատական ակտը, ապա նույն տրամաբանությամբ ինչու հնարավոր չէ բողոքարկել գործի վարույթի կասեցումը վերսկսելու մասին դատական ակտը»:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխում օրենսդիրը դրույթ չի նախատեսել առ այն, որ անձը կարողանա վերաքննության կարգով բողոքարկել գործի վարույթը վերսկսելու մասին սպորադաս դատարանի դատական ակտը, այսինքն՝ օրենքի նշված բացը խոչընդոտում է դատական պաշտպանության իրավունքի իրականացման ապահովմանը, հետևաբար՝ «վիճարկվող գլուխը պարունակում է սպորադաս դատարանի դատական ակտի՝ գործի վարույթի կասեցումը վերսկսելու մասին որոշման վերաքննության կարգով բողոք ներկայացնելու սահմանափակում»:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Գործի վարույթի կասեցումը» վերտառությամբ 16-րդ գլուխը բաղկացած է 105, 106, 107 եւ 108-րդ հոդվածներից: Ընդ որում, վերոնշյալ առաջին երեք հոդվածները, այն է՝ 105, 106 եւ 107-րդ, կարգավորում են համապատասխանաբար գործի վարույթը կասեցնելու՝ դատարանի պարտականության, գործի վարույթը կասեցնելու՝ դատարանի իրավունքի եւ գործի վարույթը վերսկսելու հետ կապված իրավահարաբերությունները: Ինչ վերաբերում է 108-րդ հոդվածին, ապա այն կանոնակարգում է գործի վարույթը կասեցնելու եւ վերսկսելու կարգին առնչվող իրավահարաբերությունները: Ընդ որում, վերջինիս երկրորդ մասն է հենց ամրագրում գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման հնարավորությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Դիմողին ներկայացվող այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող դրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ: Ինչպես վկայում է դիմումի ուսումնասիրությունը՝ դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել խնդրո առարկա գլխի 105, 106, 107-րդ հոդվածներով, ինչպես նաեւ ներկայացված չէ անմիջական պատճառահետեւանքային կապը վերոնշյալ դրույթների եւ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջեւ: Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշմամբ դիրքորոշում է հայտնել, որ եթե դիմողը չի հիմնավորում վիճարկվող դրույթի եւ իր իրավունքների ենթադրյալ խախտման

փաստի միջեւ պատճառահետեւանքային կապը, ապա տվյալ դեպքում դիմումն ակնհայտ անհիմն է:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխի 108-րդ հոդվածին, ապա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործի քննությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխի 105, 106 եւ 107-րդ հոդվածների սահմանադրականությունը վիճարկելու մասով մերժել:

2. Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ գլխի 108-րդ հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասով ընդունել քննության եւ որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

8 հունիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-15